

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### ՀՀ ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ ՀԿԴ/0073/15/23 ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գույքի արգելադրման մասին նախաքննության մարմնի որոշումը վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավոր լինելուն, արձանագրել է. «(...) անձի սեփականության իրավունքը սահմանափակող հարկադրանքի միջոցի՝ գույքի արգելադրման կիրառման ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարաչափ պաշտպանությանն ուղղված պահանջներն առավել խիստ են այն պայմաններում, երբ արգելադրման է ենթակա քրեական վարույթով մեղադրյալի կարգավիճակ չունեցող երրորդ անձի գույքը:

Ըստ այդմ էլ, օրենսդիրը որոշակի առանձնահատկություններ է սահմանել երրորդ անձի գույքի արգելադրման համար և տարբերակել երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի և մեղադրյալի գույքի արգելադրման կառուցակարգերը: Այս տարբերակման առավել խիստ պահանջներ նախատեսելու կարգավորման հիմքում ընկած է իրավաչափ այն գաղափարը, որ քրեական օրենքով արգելված արարքի կատարմանն առնչություն չունեցող անձի իրավունքների սահմանափակման իրավաչափությունը ենթադրում է հնարավոր կամայականություններն ու չարաշահումները բացառող առավել լուրջ երաշխիքների առկայություն՝ ապահովելու համար միջամտության համաչափությունը հետապնդվող նպատակին:

(...) Եթե հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելու կամ հանցանք կատարելու համար նախատեսված գործիք կամ առարկա լինելու հիմքով գույքի արգելադրման համար համապատասխան հիմքի առկայությունը հիմնավորելու համար անհրաժեշտ է հաղթահարել ապացույցների գերակշռության շեմը, ապա մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքն օտարելու, թաքցնելու, վնասելու, ոչնչացնելու կամ սպառելու հիմքով արգելադրելու համար բավարար է հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ ողջամիտ ենթադրության առկայությունը:



(...) Վերոշարադրյալից բխում է, որ ապացույցների գերակշռության և ողջամիտ ենթադրության շեմերն էապես տարբերվում են միմյանցից, քանի որ առաջինն ապացուցման ավելի բարձր բեռ է դնում վարույթն իրականացնող քննիչի վրա՝ պարտավորեցնելով վերջինիս ապացույցների գերակշռությամբ հիմնավորել արգելադրման ենթակա գույքի և հանցանքի միջև պատճառական կապի առկայությունը: Մինչդեռ ողջամիտ ենթադրության պարագայում ապացուցման շեմն ավելի նվազ է, և վարույթն իրականացնող մարմինը պետք է գործով ձեռք բերված փաստական տվյալ(ներ)ով հիմնավորի գույքն օտարելու, թաքցնելու, վնասելու, ոչնչացնելու կամ սպառելու հավանական վտանգը, սակայն այս դեպքում ևս քննիչը պետք է որոշակի հիմնավորում ներկայացնի: Գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական վտանգը վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնավորի գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը հաստատելու մասին միջնորդությանը կից ներկայացված՝ գործով ձեռք բերված փաստական տվյալ(ներ)ով, հակառակ պարագայում անհարկի կսահմանափակվի իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը»:

\*\*\*Ամփոփագրերը կազմվում են “Բարձր դատարանների նկատմամբ հանրային վստահության ամրապնդման ծրագրի” Դատարանների նախադեպային որոշումների ամփոփագրերի կազմման բաղադրիչի շրջանակներում: ⚖

